նել և ոչ կարացին կատարել. նախ՝ որ պատրաստութիւն պիտենայ, որպէս և հրամանքդ քաջ գիտես, երկրորդ՝ որ կանուխ ժամանակ է, իսկի չէ վարդավառին յուղղիլ պիտ ապա ժամանի. ահա ունիմ ընդ իմ զՄարկոս էրէցն աստ և անդ յղելոյ. Պետրոս եպիսկոպոսն ևս գալոց է, եթէ մարթասցի՝ սոցա միննն ուղարկեմ առ նա, տեսանել զկամս նորա. յայսմ ամ գայ թէ ոչ, գայս ամենայն և այլ թէ ինչ իցէ պակաս ի մտաց մերոց, խնդրեմ հոգալ և թապտիր տեսանել. գիր մի աստ ի ձեռն ուլախից չուտով հասուցանել և գայլն գիտել հրամանուցդ լիցի կամ: Ծառայքս, որպէս ուխտեալ է, կայ ի պատրաստ առ ի ծառայել մինչ ի մահ, և դու զոր ինչ իմիտ ածցես, դու քո հոգին: Եւ թէ զՊալատցոց բանն հարցանես, նա՝ յառաջին օրն մեծ ազմուկ եղև, մինչ զի չավուշ յղելցին յՈւսկիւտար զՍուքիաս վարդապետն արգիլլոյ և ոչ գտին, զի նա ի նոյն օրն կիրակի գնացեալ էր. յետոյ գնացին մօտ ի պատրիչն(*) իւրեանց՝ թէ մեր մեծն դու ես, այլոց ինչ պարտիմք. նա տուեալ էր հրաման կատարել անխիղճ զմահ և զկեանս նոցին երիցանցն. յետոյ այլք այլ իմն բան էին ասացեալ՝ թէ նորա արգիլելն քեզ չահ է, զի զամենայն իրաւունս նոցա քեզ է պարտ տանել ատէրունի. երթեկին պակաս չէր և զկնի մեր ոչ գիտեմ զինչ գործեցաւ. բաւեսցի այսքան: Գլուխ խառվութեան, արբանեակ չարին, ատոհման գժոխոց և մեծ չունն բրտի և այլք նոցին հետևողք բազումք. և զկնի քոյոց գնացիցն Մինտէրճին և Սուրմէլին այլումն հոմանեօք իւրեանց յարեան ի վերայ մեր, զոր ինչ կայր ամբարեալ ի սիրտս իւրեանց՝ թօթափեցին ի պատճառ մնացեալ պարտուցն էմիրի: Նոյնպէս և Աստուածածնայ մէկ քանի շուն ըստ իւրեանց արժանւոյն զօղանջեալ առին զառհաւատչեայս և գնացին. և չէհրի շունն պօյրուլթի ևս երեր յՈւսկիւտար ի վերայ մեր. Աստուծով յայնմանէ ևս զերծաք: Բայց Մինտէրճի շան ազգ և ազգ հաջմանցն առ Վեհն մեր և առ մեզ ոչ լիցի ներել իբր զՍիմէի. եթէ ի մէնջ զերծցի, Սողոմոնիւդ ասցուք զվրէժս ի նմանէ: Անմեղադիր լե՛ր, զի կարի շատ խօսեցաք ըստ բերման ժամուն: Ահա զՄարգիս վարդապետի գիրն ևս յղեցի, որ եկն առ իս յՈւսկիւտար, ընդ սմին և զթղթարեր Սարգիսդ թէ ուղարկեցես առ մեզ գրիւ քոյով՝ կամ քո լիցի: Եւ ողջոյն բազում կարօտիւ լիցի առ եղբայր մեր և որդի Սուքիաս վարդապետից եւ Ներսէս պատանի: Հրատ.՝ Մ. Ե. Ն.

(*) Պատրիարքը բսել կ'ուզէ, որ է Ղազար Սեբաստացի: Ծ. Հ.

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ս. Էջմիածնի Մայր-Աթոռոյ Տեղակալ Ամեն. Տ. Խորէն Սրբազան Ս. Աթոռոյս Սրբազան Պատրիարք Հայրը հրաւիրած է Ներկայ գտնուիլ Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան, յատուկ պաշտօնագրով մը, զոր ընթերցողք կը տեսնեն ստորև: Գերագոյն Հոգևոր Խորհուրդի կողմէ նոյնիմաստ հրաւէրի պաշտօնագրեր ուղղուած են նաև Ս. Աթոռոյս միաբան Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ, Մատթէոս եւ Սմբատ Սրբազաններու:

Պատճէն

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ԹՈՐԳՈՄ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՇԱԿԵԱՆԻՆ

Գերագոյն Հոգևոր Խորհուրդը ուրախ է հաղորդելու Ձերդ Ամենապատուութեան, որ Հայաստանի Կենտրոնական Իշխանութեան թոյլտուութեամբ գումարուելիք Ազգային Եկեղեցական Ժողովի բացումը տեղի է ունենալու տարւոյս Նոյեմբերի 10 ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդը իւր պարտքն է համարում այս առիթով ևս խնդրելու Ձերդ Ամենապատուութեան նշանակեալ ժամանակին ժամանելու Մայր Աթոռ, անձամբ մասնակցելու Ազգային-Եկեղեցական Ժողովին:

Միանգամայն վստահ, որ պատիւ կ'ունենանք տարւոյս Նոյեմբերի 10 ին տեսնելու Ձերդ Ամենապատուութեան Մայր Աթոռում, խնդրում ենք մեկնելու և Բաթում հասնելու ժամանակի մասին տեղեկացնել:

Եղբայրական սիրոյ ողջոյններով և յարգանքներով

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի եւ
Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
(Ստորագրութիւն)
Աղօթակից՝ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

---

## ՎԱՐԺԱԿԱՆ, ԺՈՂՈՎԱԿԱՆ, ԵՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

Ս. Աթոռոյս **Տնօրէն Ժողովը** Յուլիս 4-31 ամսօրեայ ընթացքին տասնեւերեք անգամ գումարուեցաւ, իբրեւ գործադիր իշխանութիւն եւ վարչական մարմին, զբաղելով եկեղեցական եւ վարչական եւ մանաւանդ Ս. Տեղեաց իրաւանց պահպանութեան եւ մատակարարական գործերու կարգադրութեամբ, իսկ իբր կրօնական ատեան, երեք անգամ գումարուելով, կատարեց ամուսնական եւ ժառանգական խնդիրներու վերաբերեալ տնօրինութիւններ.— Տնօրէն Ժողովոյ անդամներէն Տ. Սմբատ Սրբազան եւ Տ. Տիրան վարդապետ պաշտօն ստացան, իբրեւ քննիչ, յատուկ կանոնագրութեան մը համեմատ, հսկել մատակարարութեան եւ պիւտճէի գործադրութեան վրայ: Նոյնպէս, Տ. Սիոն վրդ. կարգուեցաւ կալուա-

digitised by A.R.A.R.@

ծոց Տեառն։— Աւարտեցան ճարտարապետական եւ նաւագուրգի գործողութիւնները շինութեան **Չարինեան** կալուածին, որուն պիտի ձեռնարկուի ընդհուպ։— Նոյն շէնքին կից, միեւնոյն ազգապատկան գետնին վրայ պիտի կառուցուի նաեւ ուրիշ շէնք մը՝ արդեամբ տասնմէկ եկեղեցական եւ աշխատաւոր միաբաններու, որոնք ցկեանս կը վայելեն անոր եկամուտը, որ իրենց վախճանումէն յետոյ կը մնայ Ս. Աթոռոյ։ Վանքին այժմեան կալուածներուն մէջ կան, հանգուցեալ միաբաններէ այսպէս փոխանցուածներ բաւական թուով։— Տ. Խորէն վրդ. կարգուած ըլլալով Տեառն Բեթղեհէմի վանուց եւ Տ. Ներսէս վրդ. Յոպպէի եւ Ռէմլէի, երկուքն ալ ձեռնարկած են իրենց պաշտօններուն։— **Միաբան. Ընդհ. Ժողովը** Յուլիս 5ին գումարուեցաւ, եւ զբաղեցաւ ընթերցումովը նախորդ Տնօրէն Ժողովոյ գործունէութեան տեղեկագրին, որուն քննութիւնը յանձնեց Քննիչ Մասնախումբի մը։

**Սրբազան Պատրիարքը այցելեց**

● Յուլիս 13ին, դշ. Տ. Տիրան վրդ.ի, Ոսկան Պէյի եւ Գ. Նուրեանի հետ Երիքով, վանքապատկան այգիին մասին վերջնական կարգադրութեան եւ Յորդանանու եզերքը կառավարութենէն մեզ եւս տրամադրուած հողաբաժինը տեսնելու համար։

● Յուլիս 14ին, եշ. դիւանապետ Գ. Նուրեանի հետ՝ Ֆրանսական Հիւպատոսարան, հանրապետութեան ազգային տօնին առթիւ, ի շնորհաւորութիւն։

● Յուլիս 15ին, ուր. Տ. Սմբատ Սրբազանի հետ՝ Թուրքիոյ Նոր հիւպատոս Թալաաթ Գայաալփ Պէյին։

● Յուլիս 17ին, կիր. Վսեմ. Ոսկան Պէյի եւ Տ. Զգօն վրդ.ի հետ, Քեբրոն։

● Յուլիս 20ին դշ. Տ. Կիւրեղ վրդ.ի հետ, Անկլիքան Ս. Յորճ եկեղեցին, հանգ. նախկին Բարձր Գոմիսէր Լորտ Բըլմըրի համար եղած հոգեհանգստին առթիւ։

● Յուլիս 21ին, դշ.., Ոսկան Պէյի եւ Տ. Տիրան եւ Տ. Զգօն վարդապետաց հետ, Էմմաուս։

**Սրբազան Պատրիարքին այցելեցին**

● Յուլիս 7ին, եշ. Քաղաքապետ Ռաղիպ Նաշաշիպի Պէյ, քաղաքապետական ժողովոյ անդամ Եազուլ Էֆ. Ֆարահի եւ անգլիացի ճարտարապետը, ազգապատկան գետնի մը վերաբերեալ խնդրոյ մասին տեսակցութեան մը համար։

● Յուլիս 13ին, դշ. Թուրքիոյ Նոր ընդհ. հիւպատոսը Թալաաթ Գայաալփ Պէյ, որ ի բացակայութեան Ն. Ամենապատուութեան, այցաքարտը թողուց։

● Յուլիս 19ին, գշ. Ֆրանսայի Ընդհ. Հիւպատոսը Գ. Վիգոնդ Տ'Օմալ։

● Յուլիս 7ին, դշ.., Տ. Գէորգ վրդ. եւ քարտուղար Գ. Աշոտ, յանուն Տնօրէն Ժողովոյ գացին Յոպպէ, Նոր Տեսչին յանձնելու համար իր գործոց վերաբերեալ կարասիները։

● Յուլիս 25ին, բշ.., Տ. Սմբատ Սրբազան, Տ. Սիոն վրդ. եւ Գ. Նուրեան, յանուն Տնօրէն Ժողովոյ այցելեցին Երիքով, աթոռապատկան այգին յանձնելու համար նոր վարձակալին։

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԲԵՄԱԿԱՆ

● Յուլիս 10ին, կիր., Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի Հայկական Գողգոթայի վերնատան մատուռին մէջ, ժամարարն էր Տ. Հայկազուն վրդ. որ եւ քարոզեց «Թոշակ մեղաց մահ է» բնաբանին վրայ, բացատրելով թէ ամէն անկում հետեւանք է սխալանքի մը, եւ հոգեկան ամէն նուազում՝ բարոյական զանցառութեան կամ մեղքի, եւ թէ այս իրողութեան մտածումը ինքնին պէտք է լաւագոյնս ճանչցընէ մեզի՝ Քրիստոսի շնորհիւ մեզի պարգեւուած փրկութեան արժէքը։

● Յուլիս 16ին, շբ.., Մայր Տաճարին մէջ, Գիւտ Նշխարաց տօնին առթիւ, երէկի նախատօնակէն վերջ, այսօր կատարուեցաւ հանդիսաւոր պատարագ, եւ համբոյր Նշխարաց Ս. Լուսաւորչին։ Պատարագը մատուցուեցաւ Ս. Մակարի սեղանին վրայ, որոյ ներքեւ կը հանգչին մասունք սրբոյն. ժամարարն էր Տ. Զգօն վրդ.։— Վսեմ. Ոսկան Պէյ, որ, իբրեւ Երիզացի, խանդակաթ յիշատակներ ունի Սեպուհի սրբարաններէն եւ Լուսաւորչի գաւառին բոլոր նուիրական վայրերէն, ընդունեց Ս. Պատրիարքին, Սրբազան Եպիսկոպոսաց եւ միաբան հարց այցելութիւնները։

● Յուլիս 17ին, կիր., Ս. Յակոբեանց Տաճարին մէջ, ուր ժամարարն էր Տ. Գէորգ վրդ. քարոզեց Տ. Պարգեւ վրդ., որ անդրադառնալով երէկուան տօնին, բացատրեց Ս. Գրիգոր Լուսաւորչի առաքելական գործին մեծութիւնն ու նշանակութիւնը։

● Յուլիս 21ին, եշ., Մայր Տաճարի մէջ, երէկի մեծ նախատօնակէն յետոյ, այսօր կատարուեցաւ հանդիսաւոր տօնախմբութիւն Ս. Սահակայ եւ Մեսրոպի թարգմանչաց տօնին առթիւ. ժամարարն էր Տ. Գարեգին վրդ. Ս. Պատրիարքը քարոզեց, բացատրելով գիրերու գիւտին արժէքը՝ եկեղեցական վերածնունդին եւ ազգային ինքնապահպանութեան տեսակէտով։

● Յուլիս 24ին, կիր., Գիւտ Տփոյ տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Աստուածամօր գերեզմանի ուխտավայր եկեղեցիին մէջ, ի Գեթսեմանի. ժամարարն էր Տ. Պարգեւ վրդ. քարոզեց Տ. Սմբատ Սրբազան, որ, խօսելով Ս. Կոյսին խոնարհութեան վրայ, բացատրեց այդ առաքինութեան բարոյական արժէքը, զայն ցուցնելով աստուածային կամքի համակերպութիւն. որուն մէջ կը բարձրանայ եւ կը զօրանայ միայն մարդուն հոգեկան կեանքը։

● Յուլիս 31ին, կիր., Ս. Յարութեան Հայկական Գողգոթայի մատուռին մէջ պատարագեց Տ. Զգօն վրդ. եւ քարոզեց. նիւթն էր կրօնական կեանքին կարեւորութիւնը. բացատրեց թէ մարդ ո՛րքան աւելի խնամք եւ հոգածութիւն պէտք է ունենայ հոգիին համար, որ «առաւել է քան զմարմին», ու հոգեկան կեանքը ո՛րքան աւելի պէտք ունի սնուցումի եւ դաստիարակիչ կրթանքի, որպէսզի մարդը չշեղի իր կոչումին բարոյական ուղղութենէն։

---

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ

● Ամառեայ այս տեւողութեան ընթացքին, Ս. Աթոռոյս **Ուսումնական Խորհուրդը** գումարուեցաւ երեք անգամներ, եւ զբաղեցաւ իր պաշտօնին վերաբերեալ գործերու կարգադրութեամբ։— Իր վերջնական

digitised by A.R.A.R.@

ձեւին վերածեց Ընծայարանի կանոնագրութիւնը, որ, Տնօրէն Ժողովի վաւերացումէն վերջ, գործադրութեան դրուեցաւ։ Այժմ, կը զբաղի Ժառանգաւորաց եւ Ընծայարանի ծրագրի վերամշակութեամբ։ — Պատրաստեց եւ Տնօրէն Ժողովոյ վաւերացման ներկայեց Դուրեանաշէն կալուածին պիւտճէն. այս եկամուտին արդիւնքովը պիտի հոգացուի Ս. Աթոռոյս Մատենադարանի մատակարարութիւնը. տարեկան մօտաւորապէս երկու հարիւր ոսկւոյ արժողութեամբ հրատարակութիւն պիտի ըլլայ նախնեաց եւ դպրոցական գործերու **«Եղիշէ Պատրիարք Դուրեան Մատենադարան»** շարքին ներքեւ. Նոյնպէս, հաստատուեցաւ **«Եղիշէ Պատրիարք Դուրեան»** անուամբ **գրական մրցանակ** մը, որ թէ՛ ուղղութեամբ եւ նպատակով, եւ թէ՛ վարձատրութեան կերպով բոլորովին պիտի նմանի **«Յովսէփ Իզմիրեանց»** մրցանակին, որ պարագայից բերմամբ այժմ դադրած է գոյութիւն ունենալէ։

● Քաղաքացի եւ գաղթական ազգայնոց Ս. Թարգմանչաց վարժարանի տարեկան քննութիւնք սկսան Յուլիս 11ին բշ. եւ տեւեցին ութ օրեր. իսկ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի քննութիւնք սկսան Յուլիսի 18 բշ.էն եւ տեւեցին մինչեւ 27, դշ. Բերանացի քննութեանց մաս ներկայ գտնուեցան Ս. Պատրիարքը եւ Արքազան Եպիսկոպոսունք եւ միաբան հայրեր։ Քննութեանց արդիւնքը գոհացուցիչ կը նկատուի։

● Տ. Գեղամ Վրդ. կոչուեցաւ երաժիշտ ուսուցիչի պաշտօնին, փոխանակ Գ. Զիլինկիրեանի, որ հիւանդութեան պատճառաւ հեռացած կը մնայ այդ գործէն։

● Յուլիս 24ին կիր. օրը, Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ կատարուեցաւ գրական գեղեցիկ հանդէս մը, ի ներկայութեան ժողովուրդի հոծ բազմութեան. աշակերտներ արտասանութիւններ կատարեցին, անոնցմէ մին ի բերան արտասանեց Առակաց գրքին Ա. գլուխը, իբրեւ անդրանիկ թարգմանութիւն Աստուածաշունչի, կատարուած Ս. Մեսրոպի ոսկի գրչէն. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ». Վարդգէս սարկաւագ կարդաց ինքնագիր ճառ մը, որ կ'երեւի **Սիոնի** այս թիւին մէջ. Տ. Զգօն վրդ. բանախօսեց, նիւթ ունենալով Սահակի տեսիլքը եւ Մեսրոպի տեսլականը. Վսեմ. Ոսկան Պէյ հանգամանօրէն խօսեցաւ Մեսրոպի անձին ու գործին վրայ՝ խորհրդածութիւններ հիւսելով Առակաց գրքի առաջին գլուխի իմաստին շուրջը՝ վերաբերութեամբ այն մտածումներուն, զորս Թարգմանիչք ունէին ազգին բարոյական կեանքին համար, այդ թարգմանութիւնը կատարած ատեն։ Զուարթախոհօրէն անցուց, բայց համոզումի մօտեցող զգացումով մը ջանալով նոյն ատեն հաստատել թէ, Մեսրոպ անունը, զոր չեն գիտեր ոչ Կորիւն եւ ոչ Փարպեցի, ժողովուրդին լեզուին մէջ մնացած ձեւն է միայն «Մեր-Սուրբ»ը կոչումին, որով ազգը հաւանաբար շատ կանուխէն պատուած պէտք է ըլլայ Ս. Մաշտոցը։ — Աշակերտներ երգեցին, Բարգէն սարկաւագ նուագեց դաշնակի վրայ։

● Յուլիս 30ին երեկոյին, շբ., Ընծայարանի սրահին մէջ նախագահութեամբ Ս. Պատրիարքին եւ ի ներկայութեան միաբանութեան, կատարուեցաւ **գրական երեկոյթ** մը. Եղիազար եւ Յակոբ սարկաւագներ կարդացին իրենց գրած բանախօսութիւնները, առաջինին նիւթն էր. «Պատմութիւնը հոգեբանութեան համար ինչպէս կրնայ ըլլալ աղբիւր տեղեկութեանց». երկրորդինը՝ «Իմացականութեան գլխաւոր գործողութիւնները»։ Արիստակէս սրկ. կարդաց իր գրաբար թարգմանութիւնը Պուրտալուի մէկ քարոզէն հատուածի մը. Հրանդ սրկ.՝ իր աշխարհաբար թարգմանութիւնը, «Բանաստեղծութեան վրայ» Ֆրանսերէն իմաստասիրական գրուածքի մը. իսկ Ժառանգաւորներէն Արշակ Գալուստեան՝ իր աշխարհաբար մէկ շարադրութիւնը Մեծն Տիգրանի կեանքին վերջին եղերական մէկ դրուագին վրայ։ Բոլոր ճառերը ընդմիջուեցան աշակերտներու երգերով։ — Գրական այս ա. երեկոյթը կատարուեցաւ լմանը առթիւ դպրոցական դասընթացքին երիցագոյն չորս սարկաւագներուն, որոնք այս կերպով ժամանած կ'ըլլան իրենց քահանայական ձեռնադրութեան նախօրեակին։ Այս մտօք երեկոյթ մըն ալ պիտի կատարուի յառաջիկայ եօթնեակին մէջ։

● Յուլիս 31ին կիր. յետ միջօրէին, Ժառանգաւորաց վարժարանի բակին մէջ, որ բեմազարդ հանդիսավայրի մը վերածուած էր, երեքդարեան հինաւուրց մայրիին տակ, Ս. Պատրիարքի նախագահութեամբ եւ բովանդակ միաբանութեան եւ խուռներամ ժողովուրդի ներկայութեամբ կատարուեցաւ ամավերջի դպրոցական հանդէսը Ս. Աթոռոյս Թարգմանչաց վարժարանին, ուր կը դաստիարակուին շուրջ 500 տղաներ, Ս. Քաղաքի հայութեան եւ վանքի շրջափակին մէջ բնակող գաղթականներու զաւակներ ամէնքն ալ։ Վանքը, այս հաստատութեան միայն շէնքին համար, որ, արդի մանկավարժական ճարտարապետութեան յարմարութիւններովը, Ս. Քաղաքի ամենէն ուշագրաւներէն է, ծախսած է աւելի քան 10000 ոսկի, իսկ տարեկան մատակարարութեան համար՝ մօտ իր 1000 ոսկի։ Ունի շատ բարեկարգ մանկապարտէզի բաժին մը, որուն հրեշտակային փոքրիկները, իրենց երգերով, մարզանքներով, խաղերով, պարերով, արտասանութիւններով եւ փոքրիկ ներկայացումներով, պայքարումներու եւ գեղգեղանքի դիւթական մթնոլորտի մը վերածեցին Ժառանգաւորացի շրջանակը, ատենեան մը աւելի տանելով միտքերը դէպի կրթութեան գաղափարականը, որ այսքան անոյշ շնորհներով կ'ազնուացնէ ազգին զաւակները, եւ դէպի Ս. Աթոռը, որ իր այնքան նեղ օրերուն իսկ անա կ'ընէ բարոյական եւ նիւթական այսպիսի զոհողութիւններ՝ յօգուտ ազգային սերունդին։ Մանկապարտէզը ունեցաւ 35 շրջանաւարտներ, որոնք պիտի փոխադրուին Նախակրթարան։ Իսկ այս վերջինը տուաւ իր առաջին հունձքը չորս մանչ եւ եօթը աղջիկ ընթացաւարտներ. Թագւոր Յովհաննէսեան, Կարապետ Զաքմագճեան, Հրանդ Մարտիկեան, Պօղոս Հացագործեան, Աղաւնի Զաքեան, Աղաւնի Հանեան, Երանուհի Շէօնմէյեան, Մարի Ծատուրեան, Մերուտէս Երէցեան, Վարդուհի Տէօմէճեան եւ Վէհանոյշ Պետրոսեան։ Ս. Պատրիարքը, անձամբ բաշխելէ վերջ ամէնուն վկայականները, խօսեցաւ ըզգածուած սրտիւ, ծնողներու գուրգուրանքն եւ մտաւոր հոգածութիւնը յանձնարարելով իրենց զաւակներուն դաստիարակութեան եւ ընդհանուր առմամբ ազգային կրթութեան նուիրական գործին վրայ։ — Ամենէն ետք խօսեցաւ Վսեմ. Ոսկան Պէյ, յորդորելով երուսաղէմաբնակ հայութիւնը՝ գիտնալ եւ գնահատել վանքէն իրենց եղած մեծ բարիքը, իրենց զաւակաց ուսումնական եւ բարոյական զարգացումին համար։

---

**Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ**

digitised by A.R.A.R.@